

ՇԱԲԱԹԱՐԱԹԵՐԻ ԳԻՆԸ:

Տարեկան գին է 7 ռուբլի (փոստի ծախսով): Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցեով. В редакцію Армянской Газеты „Մասոօ“.
Թիֆլիսում կարելի է ստորագրվի խմբագրատան մէջ (Սրբոստանի տուն) և ընկալով ընթերցարանումը:

ՅԱՅՏԱՐԱՐԱԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնավոր յայտարարութիւն սպել տուող պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կողէկ արծաթ: Յայտարարութիւնները տպւում են չայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիարէն, գերմաներէն և քուրդերէն:

ՄԱՍՍՈ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱՐԱԹԵՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Գալու 1873 թ. „Մշակը“ կը հրատարակվի մի և նոյն պրոգրամայով:

- I. Տէրութեան կարգադրութիւններ:
 - II. Դատաստանական, ժամանակակից դրութիւն, կարգից դուրս նշանաւոր պրոցեսների կարծ տեղեկութիւններ:
 - III. Ներքին տեսութիւն. ամենանշանաւոր ժամանակակից երևոյթները մեր հայրենիքի կեանքում:
 - IV. Ըրտաքին տեսութիւն. տեղեկութիւններ քաղաքական արդեան կեանքի ընթացքի օտար պետութիւնների մէջ, նմանապէս նոցա կենսական երևոյթների, քաղված թէ ռուսական, թէ այն ամեն արտասահմանեան պարբերական հրատարակութիւններից, որոնք կախերութեան սահմաններում թոյլ են տուած:
 - V. Բանասիրական և զանազան յօդվածները (ինքնուրոյն և թարգմանական) գիտութիւնների զանազան ճիւղերից:
 - VI. Մատենագրութիւն հայկական, ռուսական և քանի մի օտար լեզուներով հրատարակվող գրքերի քննադատութիւններ:
 - VII. Ֆէլիէտօն.
 - VIII. Ընկերական ժամանակակից դրութիւն:
 - IX. Յայտարարութիւններ:
- „Մշակը“ կը հրատարակվի չաբաթը մի անգամ 1 մինչև 2 թերթ փոքր գրքի: Տարեկան բաժանորդութեան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով):

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Մանուկներն, — և կերակրողներն միտքը: — Ներքին տեսութիւն: Ռուս. Новості լրագրից: Նամակ Նոր-Նախիջևանից: Նամակ Գանձակից: Ներքին լուրեր: — Դատաստանական: — Արտաքին տեսութիւն: Ֆրանսիա: Վ. Պոլսից: Գերմանիա: Նամակ Գալիցիցից: Մասնագրութիւն: Արտաքին լուրեր: — Եւրոպական: — Յայտարարութիւններ:

Ինչպէս 1872 թուին, նոյնպէս և գալու 1873 թուին, „Մշակ“ քաղաքի բաժանորդութեան համար առաջարկում ենք ցանկացողներին գանազան քաղաքներում լինել գործակալատանը: Տաս բաժանորդութիւն հաւաքողին տասնութ մէկ երրորդ համարը կուղարկվի ձրիաբար: Խնդրում ենք որ գործակալատանը լինելու ցանկացողները նամակով յայտնեն իրանց ազգանունը խմբագրութեանը:

ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԻՏԲԸ
I
Իւրաքանչիւր մարդը, ապրելով հասարակութեան մէջ մի և է աշխատանքի ոյժ է ներկայացնում: Աշխատանքը գանազան առաջ է լինում. մեր կոչիկներ կարուծ, միւսը արտեր է վարում, երրորդը առեւտրա-

կան տան մէջ է ծառայում, չորրորդը արքունի ծառայութեան մէջն է, հինգերորդը կառավարում է իր ժառանգական կալվածները: Իւրաքանչիւրը այս կամ այն գործով ապրում է: Այն, ինչ որ ամեն միւր անգամ է, գործում է ապրելու, իր պահանջներին լրում տալու համար, — է նորա արդիւնաբերութիւնը:

Արդիւնաբերութեանը գործը դրող աշխատանքի տեսակը ի հարկէ միայն չէ ամենքի մօտ:

Նա որ իր կալվածներ է կառավարում, կամ մի գիւղ է գրում, բայց մարմնական ոյժից գործ է դնում և մտաւոր գործութիւնը: Նա որ վարում է հողը, կամ դարձնում թիւն է անում, թէ և գործ է դնում մտաւոր գործութեան մի յայտնի քանակութիւն, բայց նորա արդիւնաբերութիւնը գրել-խաւորապէս մարմնական աշխատանքի ծնունդ է:

Արդիւնաբերութեանը գործը դրող աշխատանքի քանակութիւնն էլ հաստատ չէ ամենքի մօտ:

Այն մարդը, որ իր արդիւնաբերութեան հասար բայց իր անձնական ոյժերից ոչինչ չունի, աւելի պիտի աշխատէ, քան թէ այն մարդը, որ բայց իր անձնական ոյժերից մի աշխատանքի մէջ ունի և դրամագլուխ (կապիտալ), որ ինքն իրան էլ աշխատում է, որովհետեւ շահ է բերում...

II
Այն մարդը արդիւնաբերում է (արդիւններ է ծնում) որ գործ դնի իր արդիւնա-

բերածը իր կենսական պահանջներին բաւականացնելու համար: Ուրեմն նա արդիւնաբերում է նորա համար, որ ժամանակով ըստ պահի:

Այն մարդը սպառում է, թէ և աղքատը այն չէ սպառում և ոչ այն քանակութեամբ, ինչպէս հարուստը:

Աղքատը առնում է իր շորերի համար էփան, կոպիտ և հաստ նիւթեր, — հարուստը թանկ և թանկագին մահուկ: Աղքատի կերակուրը աւելի վատ է, քան թէ հարուստի: Բայց նորանից աղքատ մարդը սպառում է (իր անձի բաւականութեան համար գործ է դնում) միայն ամենահարկաւոր բաներ, իսկ հարուստը բայց առաջին հարկաւորութիւնից, ունի և աւելի ուրիշ: Ուրեմն մարդ աւելի աղքատ է, այնքան նորան պակաս են և առաջին հարկաւորութեան նիւթերը:

III
Ուրեմն ամեն մարդը արդիւնաբերում է և սպառում է, միայն թէ մարդիկներից մի քանիսը աւելի արդիւնաբերում են, միւսները աւելի սպառում են:

Նա որ արդիւնաբերութեան գործի մէջ աւելի անձնական աշխատանք է գործ դնում և միջոց չունի օգնութիւն խնդրել դրամագլուխից, աւելի արդիւնաբերում է, քան թէ սպառում:

Նա որ բայց անձնական աշխատանքից միջոց ունի օգնութիւն խնդրել դրամագլուխից, — աւելի սպառում է քան թէ արդիւնաբերում:

Հասարակութեան կազմվածքի երկու ծայրերը կազմում են աշխատողները և կապիտալիստները (դրամատէրերը), որոնցից առաջինները, աւելի զուրկ լինելով դրամագլուխից, արդիւնաբերում են, կարելի է ասել, գրեթէ առանց սպառելու, — վերջինները, ընդհակառակն, որքան աւելի դրամագլուխ ունեն, — սպառում են առանց արդիւնաբերելու:

IV
Այն մարդը ձգտում է, որքան կարելի է, աւելի սպառելու, այսինքն, որքան կարելի է, աւելի բաւականութիւն տալ իր անձին:

Աշխատողը, համեմատաբար իր արդիւնաբերութեան ոյժին, շատ սակաւ է սպառում: Ուրեմն կենսական բարեկեցութեան առաւել մեծ աստիճանին հասնելու համար, նորան հարկաւոր է կամ արդիւնների մի և նոյն քանակութիւնը աւելի հեշտութեամբ ծնել, կամ իր սպառման միջոցները էփանացնել:

V
Ճշմարիտ է, որ աշխատողը համեմատելով դրամատէրի հետ, առաւել էփան է հաղնվում, էփան ուտում, էփան ապրում, — բայց եթէ համեմատենք աշխատողի (մշակի) այդ բոլոր ծախսերը նորա միջոցների հետ, այն ժամանակ կը համոզվենք, որ մշակ մարդը ամեն բանի համար աւելի թանկ է վը-

ճարում քան թէ դրամատէրը իր միջոցների համեմատ:

Այդ այն պատճառով է լինում, որ մշակը իր բոլոր պիտոյքներին դարման տալու համար, մաս մաս է առնում ամեն նիւթերը, իսկ դուք մարդ ունեցող մարդը ամեն միջոցը կարող է պաշարով առնել, ուրեմն զեջում է ստանում:

VI
Նոյնը լինում է և արդիւնաբերութեան գործի մէջ:

Առանձին մշակը, որը արդիւնաբերութեան գործի մէջ բայց հուժ նիւթերից, գործիքներից և անձնական աշխատանքից ոչինչ չունի աւելի, դժուարութեամբ է աշխատում և ուրեմն ամեն բան աւելի մեծ ծախսերով է արդիւնաբերում, քան թէ այն մարդը որ արդիւնաբերութեան գործի մէջ, բայց վերա յիշված գործիքներից, ունի և դրամագլուխ օգնութիւնը:

VII
Հարցը ուրեմն նորանուրեմն է, որ մշակ դասը, թէ սպառում է, թէ արդիւնաբերում է և արդիւնաբերութեան գործի մէջ կարողանայ դրամագլուխ ձեռք բերել:

Ինչ որ առանձնացած մի աշխատող չէ կարող անել, — կարող է անել մշակներ ընկերակցութիւնը:

Չանազան երկիրներում մշակների ընկերակցութիւնների կազմակերպութեանը հասնելու համար, գործ են դրվում զանազան միջոցներ:

Գերմանիայում երկու երեւելի մարդ աշխատել են այդ հասարակական խնդրը իրագործելու համար. Եոսէֆ Եֆօն-Գէլիէ և Ֆէրդինանդ Լասալ:

Առաջինը մշակների ընկերակցութեան գաղափարը հիմնում է ինքնուրուշութեան վերա, այսինքն մշակների խնայողութեան և փոքր տուրքերով բաժանորդութեան վերա, — երկրորդը պարտաւորում է պետութիւնը փոխ տալ մշակներին հիմնական դրամագլուխ խնայող համար մատչելի տոկոսներով...

VIII
Բայց այդ երկու միջոցներից որը աւելի ձեւնու է մշակ դասին, կամ թէ ընկերակցութեան որ ձեւը աւելի անհրաժեշտ է, սպառման թէ արդիւնաբերութեան ընկերակցութիւնը, — այդ ուրիշ հարց է:

Առայժմ բաւականանալով ասելով, թէ մեր կարծիքով առանց արդիւնաբերութեան ընկերակցութիւնների, սպառման ընկերակցութիւնները շատ չնչին օգուտ կարող են բերել:

Մեր կարծիքով, ամեն միջոցներով պէտք է այժմ նպաստել, մասնաւոր մեր գիւղական ազգաբնակչութեան մէջ, գիւղական փոխառու և խնայողութեան ընկերակցութիւնների օգնութեամբ, իրագործել արդիւնաբերութեան ընկերակցութիւնները:

արդէն ընտրել են մի ուրիշ անձն, որ նոյնպէս անհամապատասխան է մանկավարժական պայմաններին... Վերջին աստիճանի անհամապատասխան պայագրայ է խօստանում մեզ մեր ուսումնարանը:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԶԱՐԹԱՆԻՑ

Այս հոկտեմբեր ամսին 24 և 25-ին մեր քաղաքում Տիֆլիսի Վիճակային դատարանին մի բաժանման մէջ քննուեցաւ Նուրի քաղաքի բնակիչների խմբակը, Մուլա Մահմադ և Սալման Կաւուզ-օղլիների դործը, որոնց դատաստան էին տուած սուտ փող տարածելու համար:

Պրօկուրօրի ընկեր պ. Քեհտերի դատապարտական բացատրութիւնը երեսմ էր, որ վերոյիշեալ անձինք, երեք եղբայր, քանի տարի սորանց յառաջ Նուրի քաղաքից փոխադրուեցան Ջաքարթայ առևտրական գործերով: Առետուրը Կաւուզ-օղլիները բաղկանում էր նորանում, որ նորա հիմնեցին Ջաքարթայում իրանց համար խանութ մանրորումը ծախելու նպատակաւ: առնում էին չոր-ջակայ բնակիչներին տեղական բերքերը, օրինակ, բնկոյզ, կաղին, չաղանազ, ցորեն, բրինձ և այլն, ծախում էին նորանց Տիֆլիսում, Հաշտարխանում և Երեւան-Նովոգորոնում և այն տեղերից դռնելով բախալի արարները, բերում էին Ջաքարթայ իրանց խանութի համար, առետուրը չառնակելու համար նորա յետագայ կարգն էին տընորին: Սալմանը պատում էր զիւրօրայքը և առնում էր բնակիչներին բերքեր կամ ինքը անձամբ անձին և միջնորդները օգնականութեամբ, որոնց նա կանխել վճարում էր փողը: միջնորդութեան համար նորա ստանում էին յայտնի վարձատրութիւնը: նոցա միջնորդներն էին առանձնապէս Ջաղախուլեցի Մահմադ Կաւուզ-օղլին և նուրիցի Սալման-Արդուլօղլի-օղլին: Երկրորդ եղբայր խմբակը առնում էր առած իրերը Ռուսաստան ծախելու և այնպիսի բերում էր իրանց խանութի համար ապրանք: Երկրորդ եղբայր Մուլա Մահմադը կառավարում էր խանութը և հաշվատարութիւնը: առետուրի մէջ նորա բանացնում էին տարեկան 8000 ռուբլի:

1872 թիւ սկզբում Ջաքարթայ քաղաքում և նորա յիշակայ զիւրօրայքում երեսմ են մեծ քանակութեամբ սուտ թղթագրամներ 3 և 5 մանէկանոցներ: Այդ փողերը երեսմ են յանկարծ և այնպիսի որբանութեամբ որ դարձնում են իրանց վերա տեղական կառավարութեան ուշադրութիւնը: Նահանգական կառավարիչը սկսելով ծածուկ քննութիւն, չուտով հաղորդում է հայտարար դատարանին ցուցակ այն անձանց, որոնց մաս զանվում է դալը փողերը, այդ անձինքը 26 մարդ ցուց են տալիս, որ նորա կամ ուղղակի և կամ միջնորդների ձեռքով ստացած են այդ փողերը Կաւուզ օղլիներից: Բոլոր գտնուած թղթագրամներն էին 45 հատ որոնցից հինգ հատ 5 մանէկանոցներ 1866 թիւ. ա. թ. № 161,455, բայց 40 հաւաք երեք մանէկանոց 1866 թիւ. ա. թ. № 192,835: 35 հաւաք այդ թղթագրամներից առաջին և երկրորդ արժողութեամբ ուղարկուեցան Էգզաքտիսիան, որտեղ պատրաստում են տըրութեան թղթագրամներ և Էգզաքտիսիան ընդունեց նորանց դալը—չինցու պատրաստած միքսիկական հնաքներով հասարակ թղթի վերա:

Վերոյիշեալներից երեսմ է 1) որ 45 հատ դալը թղթագրամներն զուրս տուեցին մի ամսուայ միջոցում Ջաքարթայում նահանգի մէջ Կաւուզ օղլի երեք եղբայրների ձեռքով միատեսակ մասնակցութեամբ: Կաւուզ օղլիների այդ փողերի գերտութեամբ մտնելը ապացուցած է, ա) որ չինցու փողերը միակերպ օխտանայում մտնում էին լաւերի հետ միասին միշտ մի քանի հատերով մի մարդի ձեռքով: բ) որ Կաւուզ օղլիները միշտ փոխում էին դալը փողերը լաւի հետ եթէ նորանց դարձուցանող էր լինում և գ) որ Կաւուզ օղլիները ոչ թէ կարողացին հաստատել, որ նորա ստացել են ուրիշ մարդիկներից, այլ յամառութեամբ մերժեցին նորան ծախել անելը չի նայած բաղմամբ և վիճակներին, որոնք մեղադրում էին նոցա: 2) որ Կաւուզ-օղլի երեք եղբայրը գիտութեամբ ստացել են այն փողերը իրեն դալը նորանց մըսխելու համար այնպիսի անձին որ պարագում է դալը փող տարածելով և արագութեամբ ծախել են կարճ ժամանակում, և 3) վերոյիշեալ երկու կէտից երեսմ է, որ Կաւուզ օղլի եղբայրը դատապարտվում են որ նորա գիտութեամբ իրանց յայտնի անձին, որ պարագում է դալը փողերի տարածելով, գնել են դալը փողեր հինգ և երեք մանէկանոցներ պատրաստած հասարակ թղթի վերա միքսիկական հնաքներով և նորանց սկսել են տարածել ուստի նորա պիտի ենթարկուեն պատժին 576, 573, 571 յօդով: զօրութեամբ:

Կատապարտական բացատրութիւնը կարգալուց յետոյ պ. Քեհտերը իրա ձեռք մէջ յայտնեց դատաւորներին թէ դալը փողերը առաւելագոյն պատրաստութեամբ եւրօպայի տէրութիւնների մէջ և Ռուսաստանում, բայց կովկասում չկայ դարձարան որտեղ պատրաստուէին դալը փողերը: Ջաքարթայում ենք ձեռք բերելով նորանց գտնում են միշտ պարզամիտ հասարակութիւն և նոցա մէջ տարածում են դալը փողերը, այդ չարագործութեան առաւելագոյն զօն են դարձած կովկասու աղբիւրը, ըստ որում նոցա մէջ յաճախ տարածում են փողերը: Կաւուզ օղլիները էլ աւելի լաւ տեղ են ընտրել իրանց համար, այդ տեղը ընդիտանն է Ջաքարթայում վիճակը, որոյ բնակիչների մէջ երեք խարդախութիւն չէք տեսնել: այդ տարղ մարդիկը որ դու ես վարենի դրութեան մէջն են, զօն են դարձել վատթար մարդկանց չարագործութեան, իրանց բերքերը վճարելով կամեցել են միւս պակասութիւնները լցուցանել, բայց անխիղճ մարդիկը իր լիցին նորանց ձեռքից բնութիւնից նուիրած ապրուստը և անն փոխանակ բարեխղճութեամբ հասուցանելու նոցա պատկանեալ փողերը, նորա ստացել են դալը փողեր որ այս րօպէիս ձեռ առաջին է դարձած: Պրօկուրօրը գործի բոլոր խուրձիւնը քննելուց յետոյ, ինչորից դատաւորներին, որ նորա վերոյիշեալ յօդուածների զօրութեամբ զրկեն Կաւուզ-օղլիների ամեն առանձին թէ անձնական նոցա պատկանեալ սեպականութիւններից և իրաւունքներից, ուղարկեն 7 տարի ժամանակաւ հանքերի մէջ բացանելու: (ИЗЪЯВЛЕНИЕ ПОСЛА) և այդ ժամանակը վերջանալուց յետոյ, բնակութեան համար աքսորեն նորանց միւս Սերբի:

Կատապարտականների պաշտպան պ. Նեստերովը, հերքելով պրօկուրօրի դատապարտութիւնը ասում էր որ վիճակի ցուցմունքը բաւական չէ մի այդպիսի մեծ պատժ նշանակելու մասին, որտեղ վճարում է մարդույս վիճակը, խնդրում էր որ դատապարտականներին բոլորովին ազատեն, յաւելացնելով եթէ դատաստանը հաւատացած է որ Կաւուզ օղլիները խարճել են դալը փողեր, թող ընդունեն որ այդ անպատկանամբ նոցա ձեռքն է ընկել և նորա չկամենալով զրկվել իրանց սեփականութիւնից, աշխատել են մտնելու, ուստի պաշտպանը խնդրում էր որ Կաւուզ օղլիներին պատժեն ոչ իրեն գիտութեամբ ստացած դալը փող տարածողներին, այլ իրեն անգիտութեամբ այս խաբեղայութիւն անողներին:

Կատաստանը վճեց. Կաւուզ օղլիներին զրկել ամեն առանձին թէ անձնական նորանց պատկանեալ սեփականութիւններից, ուղարկել հանքերու մէջ բացանելու 9 տարի ժամանակաւ և այնուհետև աքսորել նորանց բնակութեան համար Սերբի:

Հոկտ. 28. Աղէքսանդր Մէլիք-Փաշայեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՅԻՐԱՆՍԻԱ

Նոյեմբերի 13-ին Յրանսիայի Ագգային ժողովի մէջ հանրապետութեան նախագան պ. Թիէրը կարգաց իր պ ա տ գ ա մ ա գ ի Ր Ր (message): Նա անշափ երկար գրված է, ներկայացնում է Յրանսիայի և Եւրօպայի քաղաքական և անուսական նկարագրերը, խօսում է վերջին փոխառութեան մանրամասների վերա, Անգլիայի հետ կապված առևտրական պայմանների վերա, յիշում է բիւրժէտի և հարկերի մասին, անդրկում է, յանդիմանելով, արմատական կուսակցութեան վարձուների մասին: Վերջապէս նա խօսում է սահմանադրութեան քանի մի վերանորոգութիւնների վերա, առանց ցոյց տալու նըրանց հուծիւնը:

Կարգացած պատգամագրի հետևանք այն էր որ յարույցից անբաւականութիւն ծայրայեղ կուսակցութիւնների մէջ: Արմատական, ձախակողմեան կուսակցութիւնը անբաւական է որովհետև ամենից շատ համակրութիւն ունի: դէպի սահմանադրական վերանորոգութիւնները և պահանջում է որ հանրապետութիւնը որոշ կերպարանք ստանայ:

Աջակողմեան կուսակցութիւնը տեսնում է պ. Թիէրի պատգամագրի մէջ հանրապետութեան ժ ա մ ա ն ա կ ա ո Ր դրութեան շարունակութիւնը:

Կ. ՊՕԼՍԻՑ

Կ. Պօլսից հաղորդում են մեզ, որ առաջվայ ժամանակներում, երբ Թիւրքիայի հայերից հարկ էին հաւաքում, ամեն մի ընտանիքը իր եղած անգամների թուից պակաս էր ցոյց տալիս, այնպէս որ 5 կամ 4 անձերից բաղկացած ընտանիքում միայն երեքից էր առնվում տուրքը: Այժմ երբ կարգաւորեցաւ եւրօպական ձեռք վիճակաւ գրութիւն, Թիւրքիայի հայոց ազգաբնակչութեան մէջ փոխանակ 3 միլիոն ժողովուրդի, յայտնվեցաւ 4 միլիոն 5 հալ ժ ո ղ ո վ ո Ր դ...:

Մեզ հաղորդում են նախագէտ որ Կ. Պօլսում կան այս րօպէիս մօտ 25 հատ հայ լրագիրներ: Հայոց Թատրօնը շատ աջող է գնում և այդ լրագիրը ներկայացուցները լինում են երեք զանազան դաշինքներում: Հայ դերասանական խումբը շատ անգամ ներկայացնում է և Թուրքերէն լրագիրը և այդ վերջին ներկայացուցներին յաճախում են Թուրքաց բարձր պաշտօնեաները և Թուրք հասարակութիւնը:

—Մասիս— լրագրում գրած է թէ՛ Մեծ Եւրօքսը գաւառաց կուսակալներուն պատուէր զրկեց որպէս զն երկրագործական աշխատութիւնները քաջալիքին ամեն պէտք եղած ձեռնառութիւնն ընկելով երկրագործ ժողովուրդը: և միանգամայն իւրաքանչիւր գաւառի երկրագործական վիճակին վերայ մանրամասն և ճիշդ տեղեկութիւններ գրեն առ Բուռն:—Վատ էք լինի, եթէ Թիւրքիայի հայոց լրագրութիւնը վերջապէս հասկանար, որ երբէք ոչ մի տէրութիւնը այնքան ոյժ չունի, որ նպաստէ կամ քաջալիքէ մի երկրի տնտեսական և երկրագործական զարգացումը, այլ ինքն հասարակութիւնը պիտի համոզված լինի նորա անհրաժեշտութեան մէջ: Հայոց լրագիրներից Թիւրքիայում սպասում ենք, որ նրանք հրաւերք գրեն զաւառների թղթակիցներին երկրագործութեան և երկրագործ գասի դրութեան վերա Թիւրքիայում ճիշդ (թէ և հում) տեղեկութիւններ հաղորդելու համար:

—Ավստրիայի կայսրը զանազան կարգի պատուանշաններ ուղարկեց. Դրան պաշտօնեաներին, որոց մէջ մեր Հայրենակիցներից հետեւաներն ստացան. Հոսի դեսպան Սարգիս էֆենտի Համամ ճեան երկաթեայ թագին ա, պատուանշանը: Արգուման էֆենտի և Խորասանճեան Յովհաննէս էֆենտի նոյն կարգին բ. պատուանշանը: Նշան էֆենտի Յրանսիայի Յովսէփայ կարգին գ. պատուանշանը:

ԳԵՐՄԱՆԻԱ

„Kölnische Zeitung“ լրագրի խօսքերին նայելով, երբ հոկտեմբեր ամսին բացվեցաւ Պրուսիայի Հ է Ր Է Ն հ ա ու զ ը (վերին պալատը),—որ կազմված է ազնուական դասի ներկայացուցիչներից,—կարծում էին որ նիւտերը պիտի խաղաղ անցկենան և միմիտր Կոմ Եօլհերթը առաջարկութիւնը նահանգների ինքնակառավարութեան վերանորոգութեան մասին, առանց հակասութեան լսվեցաւ: Բայց երբ գործը յանձնվեցաւ վերին պալատի մասնաւոր քննութեանը, այն ժամանակ յայտնվեցաւ անբաւականութիւնը Պրուսական ազնուական դասի աւատական ներկայացուցիչների մէջ: Ներքին գործերի միմիտրի առաջարկութիւնների մեծ մասը չընդունվեցաւ աւատական ձայների բազմութեան ընդիմադրութեան պատճառով: Օրինակ քանի մի նահանգներում դեռ ես մնացած էին միջին դարերից քաղաքական ժ ա ու ա ն գ ա կ ա ն պ աշտօնեաները, (erbschulzen անուանված պաշտօնեաներ), նոցա տեղը Կոմ Եօլհերթը առաջարկեց ը ն ա Ր ղ ա կ ա ն պ աշտօնեաները մոցնել, բայց նորա առաջարկութիւնը մերժվեցաւ աւատական 72 ձայների բազմութեամբ:

մուծեամբ 64-ի դէմ: Միմիտրը կամեցաւ այդ անաջողութենից յետոյ պաշտօնից հրաժարական տալ, բայց կայսրը չընդունեց նորա հրաժարականը: Վերին պալատը վերջապէս մերժեց առաջարկած նահանգական վերանորոգութեան բոլոր նախագիծը:

Ինչև իցէ, Թէ Պրուսիայի Թէ ամբողջ Գերմանիայի օգուտները պահանջում են, որ տէրութիւնը ամեն միջոցները գործ դնի ազնուական դասի աւատական մնացորդների յամառ ընդիմադրութիւնը և հնացած ազգեցութիւնը կտրելու համար:

ՆԱՄԱԿ ԳԱՎՐԵՒԻՑ

Մինչև „Մշակի“ գոյութիւն ստանալն Պարսկաստանի Հայերը խաւարի մէջ էին ծածկուած: ոչ մի պարբերական թերթ նոցա վերայ չէր խօսում, նոցա վիճակի, նոցա դրութեան գիտակցութիւնը թաքնուած էր անուշադիր մոռացութեան մէջ: „Մշակը“ առաջին եղաւ, որ սկսաւ մշակել Պարսկաստանի հարցը: Ազադայի պատմագրութիւնը իւրեան պարտական պիտի համարէ այդ լրագրին, երբ նա կսկսէ քննել Պարսկաստանի տխուր անցեալը:

Բայց կարգաւոր Արարատ ամառգրի իններորդ համարում Արթ. Երեմիան վարդապետի նամակը, չեմ կարող իմ զգուհնը չը յայտնել, երբ տեսնում եմ, որ հայր սուրբը օր ցերեկով աշխատում է արևի երեսին վարդադր ձգել...:

Անս թէ օրպիսի իրողութիւն առկի՞ տուեց Արթ. հօրը իւրեան Թարգմա Առաջնորդարանին փաստական հանդիսացնել,—որպէս լսեցիք, և որպէս երեսմ է նոյն իսկ Արարատի մէջ տպուած նամակից, տեղույս Հայոց Առաջնորդը ստանում է մի հանդիմանական նամակ իւր անհոգութեան մասին, որ նա թող էր տալիս օտարազգի միսսիօնարներին տեղույս Հայ ժողովուրդի մէջ կրօնափոխութիւն տարածել:

Առաջնորդը զանազան սպառնալիքներով կամեւում է համոզել պ. Ա. Թեմադրեանին, որ նա յետս կույն իւր Մշակում հրատարակուած նամակները, յայտնելով, թէ նորա ստույգ չէին: Ազնիւ երկտառադրը, ի հարկէ, բացատում է Սրբազան հօր սպառնալիքները, որ ճարհատեալ համոզում է պ. Հեթում ձեւալեանին իւր պաշտպանութեան համար գրել այն վարկիւնը նամակը, որ տպուեցաւ Մեղրուի Ռ համարի մէջ:

Յիշեալ նամակի պատասխանը ես „Մշակի“ մէջ կարդացած լինելով, աւելորդ եմ համարում կըրկին նորա վերա խօսելը, բայց չեմ կարող մի քանի խօսք չասել Արթ. Երեմիան վարդապետի նամակի մասին:

Հայր սուրբը կոչում է „Մշակին“ անգգուշ, արդարեւ, անգրուշ է „Մշակը“. նա անգրուշ է, որովհետև խոսնի չէ ծիւղում այս կամ այն սրբազան հօր քննիւն...:

Կամենալով ծածկել պարսկաստանի Հայերի մեջ կրօնափոխութեան տարածուիլը Արթ. Երեմիան վարդապետը վկայութիւն է բերում իւրանց Ուրմիոյ գործակալի խօսքերը: Դիմադիւր փաստ, որը հերքելու համար ես միայն կը յիշեմ մեր հօրերից լսած առածը թէ „Տանուտէրի վերայ լոյս իջաւ... Ով տեսաւ,—գգրեւ“, կամ „Աղուէսից վկայ ուղեցին, իւր պոյը դէմ արաւ“:

Իսկ այն, ինչ որ վերաբերում է Մարաղայի կրօնափոխ եղած հայերին, զոցա մասին հայր սուրբը գրում է. „դորմէ չուտափոխ տեղեկացեալ մեր... հոգացած դարժ անն“:

Անս թէ օրպէս հոգացան, ոչ արժ անն“:

Մարաղայի Հայերն, անցեալ ձմեռուայ սաստիկ սովի նեղութիւնից, մասամբ աղքատութեան պատճառաւ, բոլորովին զրկուելով իւրանց կեանքի կոյրութիւնը պահպանելու միջոցներէն, ստիպվում են վաճառել իւրանց միակ սրբութիւնը—հայրենական կրօնը: Օտարազգի միսսիօնարներն իհարկէ միշտ պատրաստ են այդպիսի հանգամանքներից օգուտ քաղել, չուտով մոցնում են նոցա մէջ իւրեանց մարդիկը խոտտանալով նորանց նիւթական օժանդակութիւնները:

Թարգմա Առաջնորդարանը,—փոխանակ հեռացնելու խղճալի Մարաղացիներէն այն հանգամանքները, որը առկի՞ տուեցին նորանց այնպիսի ծայրայեղ զոհաբերութեամբ դիմել,—ուղարկում է այնտեղ մի խումբ թուրք մուհասիլներ (ուստիկանութեան ծառաներ), որ մարակի և ձեծի դրութեամբ հայրենական եկեղեցու փարակէն լքանալու հօտ կրկին դէպի այնտեղ դարձնեն:

Բայց թէ ինչ հետեանք ունենաւ մի այդպիսի անգղուզ միջոցների գործ դնելը, բաւական է միայն յիշել մարդկային պատմագրութեան այն

